**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2026թ. թիվ 169-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի ստեղծման և կառավարման համակարգի ներդրման կարգը հաստատելու մասին» թիվ 152-Ն որոշման 2-րդ և 3-րդ կետերով, նույն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2026 թվականի փետրվարի 20-ի թիվ 02/16.7/5244-2026 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ  եմ.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ներդրման սկիզբը:

2. Հաստատել Ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման և Ռեեստրի վարման համար պատասխանատու անձանց (ռեեստր վարողների) ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. Ռեեստրի վարման համար պատասխանատուներին՝

Երեք ամսվա ընթացքում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի թիվ 152–Ն որոշման պահանջների կատարումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մերի Դալլաքյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-03-16 17:38:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. մարտի 16
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2026թ. մարտի 16-ի
թիվ 169-Ա որոշման

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման և ռեեստրի վարման համար պատասխանատու անձանց

Ց Ա Ն Կ

1. Պատասխանատու ստորաբաժանում՝

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն (վարչության պետ՝ Կարինե Ադամյան)

2. Ռեեստրի վարման համար պատասխանատու անձինք՝

| | |
|---|---|
| Աիդա Շիրինյան | - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ |
| Լենա Մաթոսյան | - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Գալուստ Մելիքսեթյան | - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| Արթուր Ղազարյան | - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարա-կայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ